ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան ՊՈԱԿ-ի «Ռուսաց լեզու» (6 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ մանկավարժական ստաժի, տարակարգի և որակավորման համար սահմանված դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1):
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. Ինքնակենսագրություն (Ձև 5),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3X4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները ներկայացնում են ՀՀ-ում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Դիմումներն ընդունվում են Շիրակի մարզի «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք. Գյումրի, Մհեր Մկրտչյան 47) **2024 թվականի սեպտեմբերի 04-ից մինչև 2024թ.-ի սեպտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:**

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2024թ. սեպտեմբերի 18-ին** ժամը 13:00-ին Շիրակի մարզի «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Գյումրի, Մհեր Մկրտչյան 47:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (0312) 3-24-57 հեռախոսահամարով: